



«ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Taxpayers Rights Protection» Public Organization

ք. Երևան, 26.04.16 թ.

Ելք № 024

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ,

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Ի լրումն «Հարկ վճարողների պաշտպանություն» հասարակական կազմակերպության 2016 թվականի մարտի 29-ի թիվ 019 գրության, խնդրում ենք նաև ներկայացնել կից ներկայացված գրության բովանդակության համար հիմք հանդիսացած իրավական ակտերի կոնկրետ դրույթները՝ համապատասխան հղումով:

Հարցի վերաբերյալ իրարամերժ մոտեցումները և անհստակությունը կարծում ենք, որ հարկ վճարողների համար անելանելի վիճակ կարող է ստեղծել:

Միաժամանակ, հաշվի առնելով այն, որ վերը նշված գրության ժամկետից անցել է մոտ մեկ ամիս և գրությամբ ներկայացված հարցադրումներն էական են կազմակերպությունների կողմից հարկային պարտավորությունների հաշվարկման տեսանկյունից և այն, որ նշված հարցերում անորոշությունները ստուգումների ընթացքում կարող են տարբեր մեկնաբանությունների պատճառ հանդիսանալ, խնդրում ենք հայտնել վերը նշված գրության պատասխանի հնարավոր ժամկետների մասին:

Առդիր՝ 3 թերթ:

Հարգանքով՝

Հ/Կ նախագահ

Փ. Թադևոսյան